ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 18 ՆԻՍՏ

Ք.Երեւան 30.12.2025թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) արտահերթ նիստն անցկացվեց առկա եղանակով ՀՖԿՍՊԻ-ի գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Երեւան, Ալ.Մանուկյան 11, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ):

Նիստին ներկա էին 20 անդամներից 12-ը:

Հասմիկ Ավագյանը- ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

Արսեն Միխայլով-ՀՀ վարչապետի օգնական

Գոհար Մամիկոնյան-Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ(համաձայնությամբ)

Աշոտ Տիրացույան-Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի հասարակական և հումանինտար գիտությունների ամբիոնի դասախոս

Նարինե Մարե-Գասպարյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս

Լաուրա Միրզոյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Հեղինե Սարկիսյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Ժիրայր Դավեյան-- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Սուրեն Եղիազարյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող

Սուսան Ավետիսյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի առողջարարական տեխնոլոգիաների և սպորտային տուրիզմի կառավարման ֆակուլտետի սովորող

Առցանց տարբերակով նիստին մասնակցել են՝

Սերգեյ Աբրահամյան-ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության պետ

Դավիթ Մոսինյան-<<Հակադոպինգային գործակալություն>> ՊՈԱԿ-ի տնօրեն

Բացակայում էին՝

Արսեն Հակոբյան-ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ

Սամվել Գևորգյան-Ն.Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիականմանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն

Էդուարդ Քալանթարյան-Հայաստանի Հանրային հեռուստաընկերության մարզական մեկնաբան

Ռոբերտ Խաչատրյան-Հայաստանի ըմբշամրտի ֆեդերացիայի նախագահ

Լուսինե Տանաջյան-- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության տեսության,մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկակական կուլտուրայի դասախոս

Անահիտ Բարսեղյասն- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի հասարակական և հումանինտար գիտությունների ամբիոնի դասախոս

Հարություն Յավրյան-ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ

Եկատերինա Նահապետյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության տեսության,մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկակական կուլտուրայի դասախոս

Օրակարգ

1. Օրակարգի հաստատում,

2. Ինստիտուտ 2024-2025 ուս. տարվա գործունեության վերաբերյալ ամփոփ հաշվետվության ներկայացում,

3. Ինստիտուտի 2025թ. բյուջեի կատարողականի հաշվետվության ներկայացում ու հստատում և 2026 թվականի բյուջեի հաստատում,

4. Ինստիտուտի կանոնադրության մեջ կատարված փոփոխության հաստատում,

5. Ինստիտուտի ռեկտոր Տիգրան Սիմոնյանին միանվագ դրամական պարգևատրում տրամադրելու մասին,

6. Տարբեր աշխատակիցներից ՀԽ որոշ անդամներին դիմում-բողոքներին քննակման մասին,

7. Այլ հարցեր:

Օրակարգի 1-ին հարց

Օրակարգը հաստատվեց միաձայն

Օրակարգի 2-րդ հարց

Զեկուցող՝ Տիգրան Սիմոնյան

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը նշեց, որ 2024–2025 ուսումնական տարվա գործունեության ամփոփ հաշվետվության պատրաստման գործընթացում ինստիտուտում առաջին անգամ կիրառվել է արհեստական բանականություն, որի միջոցով իրականացվել են վերլուծություններ և ձևավորվել համապատասխան եզրակացություններ:

Նա, ներկայացնելով հաշվետվությունը, նշեց, որ 2024–2025 թվականներին ինստիտուտում աշխատել են ընդհանուր թվով 325 աշխատակից, այդ թվում՝ 124 վարչական և 201 դասախոսական աշխատող:Նա նշեց, որ ուսանողների շրջանում գրանցվել է ակտիվության և ներգրավվածության ինտենսիվության աճ:

Նա նշեց, որ ուսանողների հաճախելիության բարելավման և առաջադիմության բարձրացման նպատակով նախատեսվում է կիրառել էլեկտրոնային վերահսկողական համակարգ:

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը նշեց, որ հաշվետու տարվա ընթացքում թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների շրջանում ինստիտուտում իրականացվել է զգալի քանակությամբ գիտահետազոտական աշխատանք: Մասնավորապես, հանրապետական տարբեր պարբերականներում տպագրվել է 62 գիտական աշխատանք, ինչպես նաև՝ 29 միջազգային հրապարակում, որոնցից 14-ը տպագրվել

են Scopus և Web of Science միջազգային բարձր վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում:

Տիգրան Սիմոնյանը նշեց, որ անցած տարվա ընթացքում ինստիտուտը թարմացրել է միջազգային 3 պայմանագիր, որոնց շնորհիվ ուսանողները և մագիստրանտները հնարավորություն ունեն անվճար հիմունքներով ուսումը շարունակելու Միջազգային Օլիմպիական Ակադեմիայում, որը գտնվում է Սոչիում:

Նա ընդգծեց, որ ուսանողական խորհուրդը վերջին շրջանում մեծ թափ է հավաքել: Ֆիմայի և ուսանողական խորհրդի նախագահության աջակցությամբ ուսանողները հնարավորություն են ունեցել լայն ճանաչում ձեռք բերելու, ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային հարթակներում: Ուսանողական խորհուրդը կազմակերպում է բազմազան, հետաքրքիր և յուրօրինակ միջոցառումներ և արշավներ, որոնք ստացել են ուսանողների բարձր գնահատականը և մեծ արձագանք իրենց առնչությամբ:

Տիգրան Սիմոնյանը նշեց, որ ինստիտուտը արդեն ունի պլանավորած բազմազան միջոցառումներ, ինչպես սպորտային, այնպես էլ գիտական բնագավառում, որոնց մանրամասներին կանդրադառնան հետագայում:

Դիտարկումներ

Հեղինե Սարգսյանը Նշեց, որ այս տարի ինստիտուտում կատարվել են բավականին շատ վերանորոգումներ, մասնավորապես մարզադահլիճների վերանորոգումը, որը նպաստում է ուսանողի կյանքի որակի բարելավմանը: Նա նաև ընդգծեց, որ այժմ հաստատված է ուղիղ կապ ուսանողների և դասախոսների, ինչպես նաև ուսանողների և ռեկտորի միջև:

Գոհար Մամիկոնյանը հետաքրքրվեց, թե ինչ միջոցառումներ են ձեռնարկվել ուսանողների հաճախելիությունը բարձրացնելու նպատակով:

Պատասխան

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով Գոհար Մամիկոնյանի հարցին, նշեց, որ այս պահին հստակ պատասխան տալ հնարավոր չէ, քանի որ գործընթացը դեռ ընթացքի մեջ է:

Դիտարկումներ

Գոհար Մամիկոնյանը հարցրեց, թե կառավարման համակարգում կատարված փոփոխությունները որակապես ինչ արդյունքներ են տվել և ինչ ազդեցություն են ունեցել:

Պատասխան

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով Գոհար Մամիկոնյանի հարցին, նշեց, որ ինստիտուտը վերականգնել է ուսանողների և դեկանատների, ամբիոնների միջև կապը՝ փակելով բակալավրիատ բաժինը: Հիմա ուսանողները ավելի

սերտորեն համագործակցում են դասախոսների, ամբիոնների և դեկանների հետ, ինչը մեծ դրական փոփոխություն է դարձել:

Դիտարկումներ

Հասմիկ Ավագյանը հետաքրքրվեց Տիգրան Սիմոնյանից՝ ամբիոնի վարիչներից մեկի ոստիկանության կողմից ձերբակալության դեպքի վերաբերյալ և խնդրեց խորհրդին իրավիճակը ներկայացնել առավել հստակ և մանրամասն:

Պատասխան

Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով հարցին, նշեց, որ գործը գտնվում է նախաքննական փուլում: Նա ընդգծեց, որ դեղին մամուլում բարձրացված տեղեկությունները իրականությանը չեն համապատասխանում: Մասնավորապես, Սուրեն Դանիելյանը ինստիտուտից չի կալանավորվել, այլ կալանավորվել է իր բնակարանից, և այս պահին դատարանի որոշմամբ գտնվում է տնային կալանքում: Ռեկտորը ընդգծեց, որ գործը չի վերաբերում ինստիտուտի հետ կապված գործընթացներին: Նա նաև հավելեց, որ գրություն է ստացել Սուրեն Դանիելյանի ձերբակալության մասին, և այդ գրության հիման վրա ժամանակավորապես կասեցվել է նրա ամբիոնի վարիչի պաշտոնը:

Դիտարկումներ

Հասմիկ Ավագյանը նշեց, որ կցանկանար, որ Տիգրան Սիմոնյանը առանձնացներ հստակ իրականացված և նախատեսվող քայլերը, որոնք նպաստելու են ինստիտուտի միջազգայինացմանը: Նա նշեց նաև, որ ցանկալի է տեսնել, թե բաժինը՝ իր գործառույթների շրջանակներում, ինչ գործունեություն է իրականացրել գործընթացների մեղմացման և ունեցածը դինամիկ դարձնելու նպատակով:

Պատասխան

Տիգրան Սիմոնյանը նշեց, որ ինստիտուտում սկսել են մեծածավալ գովազդային արշավ ուսանողների շրջանում՝ ներկայացնելով, որ ինստիտուտը տալիս է լայն հնարավորություններ կրթությունը շարունակելու երկրի սահմաններից դուրս:

Դիտարկումներ

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը հարց ուղղեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ հետաքրքրվելով, թե կնքված համաձայնագրերի արդյունքում ինչ ձեռքբերումներ է ունեցել ինստիտուտը:

Պատասխան

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, օրինակ բերելով, պատասխանեց իրեն ուղղված հարցին՝ նշելով, որ Բուլղարիայի հետ նախկինում կնքված հուշագիրը եղել է ձևական և գործնական կիրառություն չի ունեցել, սակայն վերջերս այն վերաստորագրվել է: Ներկայումս ուսանողների համար ստեղծված է

հնարավորություն՝ ուսումը շարունակելու Բուլղարիայում, ինչպես նաև Եվրոպական այլ ԲՈՒՀ–երում:

Դիտարկումներ

Հասմիկ Ավագյանը հարց ուղղեց ռեկտորին՝ հետաքրքրվելով, թե արդյոք Կարիերայի բաժինը ունի հաստատված կանոնադրություն, թե ոչ:

Պատասխան

Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով Հասմիկ Ավագյանի հարցին, նշեց, որ Կարիերայի բաժինը ունի հաստատված կանոնադրություն և ներկայումս իրականացնում է ծավալուն և նշանակալի աշխատանք, որը նախկինում չէր իրականացվում:

Քվեարկության արդյունքները՝

Կողմ՝ 11

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 1

Արդյունք՝ հարցը ընդունվեց ի գիտություն:

Օրակարգի 3-րդ հարց

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը որպես համազեկուցող ներկայացրեց պարոն Զաքարյանին:

Պարոն Զաքարյանը, ներկայացնելով 2025 թվականի բյուջեի կատարողականը, նշեց, որ պլանավորված է եղել 478 մլն դրամ, սակայն ուսանողների ընդունելության աճի արդյունքում փաստացի կատարողականը կազմել է 568 մլն դրամ: Նա նշեց, որ կատարողականում ներառված են նաև դրամաշնորհներ, որոնք իրականացվել են ըստ նախատեսվածի: Զեկուցողը նշեց նաև, որ 2025 թվականին բյուջեի պլանային ցուցանիշը կազմել է 1 մլրդ 300 մլն դրամ, իսկ փաստացի ցուցանիշը՝ 1 մլրդ 426 մլն դրամ: Նա ընդգծեց, որ մի շարք պլանային ցուցանիշների դեպքում կատարողականը լիովին համապատասխանել է նախատեսվածին: Պարոն Զաքարյանը 2025 թվականի բյուջեի կատարողականը հերթականությամբ ներկայացրեց խորհրդի անդամներին:

Նա նշեց, որ ինստիտուտում իրականացված շինարարական աշխատանքների կատարողականը կազմել է 77 տոկոս: Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը հավելեց, որ

ինստիտուտը կարողացել է գործընկերների հետ ձեռք բերել պայմանավորվածություններ, որի արդյունքում որոշ նյութեր նվիրաբերվել են ինստիտուտին, ինչով պայմանավորված շինարարական աշխատանքների կատարողականը կազմել է 77 տոկոս:

Շարունակելով զեկույցը՝ պարոն Զաքարյանը նշեց, որ գործուղումների համար պլանավորված էր 12 մլն դրամ, սակայն փաստացի իրականացվել է 5 մլն 700 հազար դրամի գործուղում: Նա պարզաբանեց, որ մի շարք նախատեսված գործուղումներ չեն իրականացվել՝ հրավերների բացակայության և այլ պատճառներով, ինչով էլ պայմանավորված է պլանային և փաստացի ցուցանիշների տարբերությունը:

Դիտարկումներ

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը խնդրեց անդրադառնալ վարչական գծով ծախսերին:

Պատասխան

Պարոն Զաքարյանը նշեց, որ վարչական գծով ծախսերը կազմել են 81 տոկոս, որոնց մեջ ներառված են շինարարական ապրանքների ձեռքբերումը, տնտեսական և գրենական ծախսերը, աուդիտորական ծառայությունները, ամբուլատորիայի գործունեության ծախսերը, տրանսպորտային միջոցների պահպանման, ինչպես նաև այլ վարչական ծախսեր:

Առաջարկներ

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը հանդես եկավ առաջարկով՝ նշելով, որ նպատակահարմար է վարչական գծով ծախսերի կատարողականը հասցնել 100 տոկոսի և այդ շրջանակներում ինստիտուտի համար ձեռք բերել տրանսպորտային միջոց՝ աշխատակազմի կարիքների համար:

Նա նաև նշեց, որ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան քայլեր վերապատրաստումների ուղղությամբ՝ ապահովելու դրանց տոկոսային աճը:

Պատասխան

Պարոն Զաքարյանը շարունակելով նշեց, որ այս տարի և Ուսանողական խորհուրդը, և ՖԻՄԱ մարզական ակումբը ցուցաբերել են բարձր կատարողականի ցուցանիշներ: Նա հավելեց, որ ՖԻՄԱ մարզական ակումբը հանդես է եկել ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանի մասշտաբով անցկացված մրցումներում և ունեցել շատ լավ արդյունքներ:

Դիտարկում

Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանը խնդրեց ներկայացնել ընդհանուր ծախսերի տոկոսային ցուցանիշները:

Պատասխան

Պարոն Զաքարյանը նշեց, որ ծախսերի կատարողականը ամբողջությամբ կազմել է 97 տոկոս:Նա նշեց, որ ընդհանուր մնացորդը կազմել է 210 մլն 125 հազար դրամ, որը մնացել է պլանային գումարից: Նա հավելեց, թե ինչ է պլանավորված 2026 թվականի համար ըստ ինստիտուտի եկամուտների, որտեղ պահուստային ռեզերվը կազմում է 15 մլն դրամ:Նա նշեց, որ այս տարի պլանավորվել է երեք անգամ ավելի շատ շինարարական աշխատանքներ, ինչպես նաև երկու կաթսաների փոխարինում, ջեռուցման համակարգի փոփոխություն և 2–3 սանհանգույցի վերանորոգում:

Դիտարկումներ

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը նշեց, որ կան բացթողումներ, որոնք հարկավոր է շտկել, քանի որ դրանք տոկոսային առումով բավականին ցածր են և մասամբ թերի են, և դրանց կատարելագործման համար դեռ բավարար աշխատանքներ պետք է իրականացվեն:

Պատասխան

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով Հասմիկ Ավագյանին, նշեց, որ առկա են բաժիններ, որոնք ունեն իրականացվելիք զգալի աշխատանք, այդ թվում նաև ինքը: Նա տեղեկացրեց, որ ձեռնարկվում են անհրաժեշտ քայլեր՝ առկա բացթողումները շտկելու ուղղությամբ:

Դիտարկումներ

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը հարց ուղղեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ խնդրելով հստակեցնել, թե ներկայումս քանի վարչական աշխատող և քանի դասախոս է ընդգրկված ինստիտուտի կազմում: Նա նաև հետաքրքրվեց, թե առաջարկվող կրճատումից հետո ինչ փոփոխություն է սպասվում այս թվերի մեջ:

Հարցը դրվեց քվեարկության.

Քվեարկության արդյունքները՝

Կողմ – 10

Դեմ – 0

Ձեռնպահ – 2

Արդյունք՝ հարցը հաստատվեց:

Օրակարգի 4-րդ հարց

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը նշեց, որ դահլիճների վարձատրության հարցը հաստատվել է նախորդ նիստի ընթացքում, սակայն, քանի որ դիմել են Պետական ռեգիստրին, այնտեղից հայտնել են, որ իրենց իրավական կարգավորումների համաձայն խորհրդը պետք է կրկին հաստատի իր ընդունած որոշումը:

Հարցը դրվեց քվեարկության.

Քվեարկության արդյունքները՝

Կողմ՝ 11

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 1

Արդյունք՝ հարցը ընդունվեց:

Օրակարգի 5-րդ հարց

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը առաջարկեց օրակարգում ներառված հարցը՝ ռեկտոր Տիգրան Սիմոնյանին միանվագ պարգևավճար տրամադրելու վերաբերյալ, դնել քննարկման և քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝

Կողմ՝ 11

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 1

Արդյունք՝ հարցը ընդունվեց:

Օրակարգի 6-րդ հարց

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը նշեց, որ իրեն հասցեագրված նամակում արձանագրել է, թե Աստղիկ Մարտիրոսյանի կողմից ներկայացված դիմում-բողոքը հասցեագրված չի եղել խորհրդի բոլոր անդամներին: Ի պատասխան՝ ՀԽ անդամ Նարինե Մարե-Գասպարյանը ևս հետաքրքրվեց, թե որն է պատճառը, որ նամակը չի ուղղվել ՀԽ բոլոր անդամներին:

Դիտարկումներ

Գոհար Մամիկոնյանը հավելեց, որ նախկինում ևս եղել են նման դիմումներ,որոնք հասցեագրվաց չեն եղել ՀԽ բոլոր անդամներին, սակայն նրանք նույնպես քննարվել են:

Պատասխան

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը, պատասխանելով Հասմիկ Ավագյանի և Գոհար Մամիկոնյանի կողմից հնչեցված հարցերին, նշեց, որ ներկայացված բողոքը կրում է նեղ անձնական բնույթ: Նրա խոսքով՝ նամակ-բողոքում բարձրացված հարցերը չեն համապատասխանում իրականությանը և անհիմն են: Նա նաև տեղեկացրեց, որ տվյալ հարցը քննարկվել է Ինստիտուտի էթիկայի հանձնաժողովում, ինչպես նաև հատուկ ստեղծված հանձնաժողովում:

Նշվեց նաև, որ քանի որ նամակում առկա է եղել խնդրանք՝ ՀԽ-ի կողմից ստեղծել հանձնաժողով, որը կուսումնասիրի բարձրացված հարցերը, ինքը նույնպես կողմ է նման հանձնաժողովի ստեղծմանը:

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը նշեց, որ տվյալ պահին նոր հանձնաժողով ստեղծելու անհրաժեշտություն չկա, սակայն անհրաժեշտ է մշակել նման դիմումների հետագա ընթացակարգը:

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը առաջարկեց ՀԽ նախագահին ներկայացնել հարցի վերաբերյալ Ինստիտուտի էթիկայի հանձաժողավի և հատուկ ստեղծված հանձնաժողավի նիստերից հետո կազմված եզրակացությունները, որոնք կարող են քննարկվել նաև ՀԽ բոլոր անդամների կողմից:

Հոգաբարձուների խորհրդի Նախագահ Հասմիկ Ավագյան

Քարտուղար Լաուրա Միրզոյան